Ուսումնասիրութեան մէջ կը շեշտուի, թէ այդ գումարը գրեթէ հաւասար է յառաջիկայ տարի Եւրոմիութեան անդամակցող 10 պետութիւններուն տրամադրուելիք տարեկան ընդհանուր յատկացումներուն:

Արեւելեան Եւրոպայի հիմնարկը Գերմանիա հաստատուած ուսումնասիրական կարեւորագոյն հիմնարկներէն մէկն է եւ կ'ակնկալուի, որ Թուրքիոյ մասին պատրաստուող ամբողջական ուսումնասիրութիւնը մօտիկ ապագային հրատարակուի այս հիմնարկին կողմէ:

«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄ ՀՍԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայն» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԿԱՅՈՒՅՆ ԺԱՄԱՆ: 5:00: ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՌՈՒՍԻԱ ՄՏԱՀՈԳ՝ ՊԱՔՈՒԻ ՄԷՋ ՉԵՉԷՆՆԵՐՈՒ ԱՇԽԵՆՈՒԺԱՅՈՒՄՈՎ



Ռուշայլօ

Ռուսիոյ անվտանգութեան խորհուրդի քարտուղար Վլատիմիր Ռուշայլօ 9 Հոկտեմբերին Պաքուի մէջ հանդիպում մը պիտի ունենայ Ազրպէյճանի պահակազմական եւ զինուորական կառույցներու ներկայացուցիչներու հետ:

Վերլուծաբաններուն կարծիքով, այցելութիւնը կ'առնչուի Ազրպէյճանի մէջ սպասուող նախագահական ընտրութիւններուն, սակայն դիւանագիտական որոշ ազդեցութիւն չպիտի ունենայ, թէ զլիաւոր հարցը, որ կը մտահոգէ Մոսկուան, Պաքուի մէջ չեղնանքու հաւանական աշխուժացումն է: Չեղնանքը չեն ընդունիր ԱՀՄԷՄ Գարտապանի ղեկավարած չեղնական իշխանութիւններուն հեղինակութիւնը:

Ռուսիոյ անվտանգութեան խորհուրդի ղեկավարին Պաքու այցելութիւնը հաւանաբար կը գուզադիպի Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւի Ազրպէյճանի վերադարձին:

ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՊԵՆՏԱՆՈՒՄՈՎ ԹՐԱՍԵՔԱՆԻ ԿՐՆԱՅ ՄՆԱԼ ԱՆՂԵԿԱՎԱՐ

ԹՐԱՍԵՔԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐԱԿՈՒԹԻՒՆԸ յաջող տարի կրնայ մնալ առանց ղեկավարի, որովհետեւ Ազրպէյճան դէմ է այդ պաշտօնին վրայ Հայաստանի ներկայացուցիչի մը նշանակումին:

Ըստ ԹՐԱՍԵՔԱՆԻ կանոնադրութեան, մէկ տարուան ժամկէտով ԹՐԱՍԵՔԱՆԻ ղեկավարը քարտուղար կ'ընտրուի այն երկրին ներկայացուցիչը, որ ստանձնած է տուեալ ժամկէտին նախագահութիւնը: Կազմակերպութեան անդամ երկրներէն այս տարի ղեկավարութիւնը պիտի ստանձնէ Հայաստանը, սակայն ազրպէյճանական կողմը դէմ արտայայտուած է, որ Հայաստանի ներկայացուցիչը ղեկավարութիւնը ստանձնէ:

Նշենք, որ կազմակերպութեան միջկառավարական քարտուղարութիւնը կը գտնուի Պաքուի մէջ, հետեւաբար ղեկավարը քարտուղարը այդ ընթացքին պարբերաբար պիտի այցելէ Ազրպէյճանի մայրաքաղաքը:

9 - 10 Հոկտեմբեր Երեւանի մէջ տեղի պիտի ունենայ ԹՐԱՍԵՔԱՆԻ անդամ երկրներու միջկառավարական Յրդ նիստը: Երրորդ համաժողովի մէջ ընթացքին պիտի քննուին կանոնադրական, կազմակերպչական, ծրագրաւորային-նազմավարական շարք մը հարցեր, պիտի ընդունուի ԹՐԱՍԵՔԱՆԻ միջկառավարական յանձնաժողովի ելեմուտքի մասին յուշագիրը, փոփոխութիւններ պիտի կատարուին ԹՐԱՍԵՔԱՆԻ հիմնական կազմակերպչական ծառայութիւններին մէջ, եւ պիտի մշակուի 2004-2008 թրագիրը նազմավարութիւնը:

Համաժողովին կը մասնակցին 14 պետութիւններու եւ աւելի քան 10 միջկառավարական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ներառեալ Եւրոպական Յանձնաժողովի բարձրագույն պաշտօնատարներ: Առաջին անգամ ըլլալով համաժողովին պիտի մասնակցին նաեւ Իրանի եւ Աֆղանիստանի ներկայացուցիչները:

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազգային վարժարաններու առաջելութեան՝ իրերայաջորդ սերունդներու հայեցի դաստիարակութիւն, բարոյական արժեքներ եւ կրթութիւն ջանքերու անփոխարինելի դերակատարութեան խորապէս գիտակից, հայ աշակերտին քայլերը ամրապնդելու նպատակով տարի մը առաջ հիմնուած «Սեպուհ Ծախպագեան» Կրթական Ֆոնդը 2003 - 2004 կրթական տարեշրջանին նաեւ պիտի շարունակէ իր գործունէութիւնը կրթապատասխան յատկացնելով Ազգային վարժարաններ յաճախող աշակերտներու:

Ուրախութեամբ կը յայտնենք, որ «Սեպուհ Ծախպագեան» Կրթական Ֆոնդի օգտուելի փափաքող ծնողները կրնան ներկայանալ Պոլսի Կամուտի Ազգային Առաջնորդարան, Ուսումնական Խորհուրդի Ընկերային Ծառայութեան գրասենեակ, Չորեքշաբթի, 8 Նոյեմբերին մինչեւ 17 Նոյեմբեր, առաւօտեան ժամը 10:00-էն 13:00:

Վստահ ենք, որ «Սեպուհ Ծախպագեան» Կրթական Ֆոնդի վերահաստատուող խորապէս պիտի գնահատուի Ազգային վարժարաններու ծնողներուն կողմէ:

«ՍԵՊՈՒԷ ԾԱՎԱԶՁԵԱՆ»
ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԴ

ԻՐԱՆ - ԱԶՐՊԵՅՃԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԱՏԹԱՐԱՅՈՒՄ

Իրանի եւ Ազրպէյճանի յարաբերութիւնները վերջերս լարուած են՝ կասպից Սոփուլ մէջ երկու երկիրներու ռազմանաւերուն կատարած տեղաշարժին պատճառով: Ըստ ազրպէյճանական կողմի յայտարարութեան, 26-է 29 Սեպտեմբերին ազրպէյճանական երկու ռազմանաւեր, «բարեկամական այցելութիւն» տուած են Աստարաւան, ինչ որ զայնուրոյ յայտարարուած է իրանի: Իրեւ հակազդեցութիւն, իրանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Համիտ Ասեֆի կողմ յայտարարութեամբ մը հանդէս եկած է՝ մեղադրելով Ազրպէյճանը եւ յստակ նշելով, որ իրան չի բացառեր իր անվտանգութեան ապահովման համար որոշ քայլեր առնելու կարելիութիւնը:

Իրեւ պատասխան իրանի պետական պաշտօնատարին յայտարարութեան, Ազրպէյճանի նախագահի աշխատակազմի հասարակական - քաղաքական բաժնի փոխ խօսնակ Ռուստամ Մահմետով՝ անդրադառնալով իրանի դիրքորոշման, նշած է, որ Ազրպէյճանի եւ Ռուսիոյ զինուորական համագործակցութիւնը իրանի կառավարութեան մէջ կասկածի տեղ կու տայ, սակայն վերջինս այս մէկը բացայայտօրէն չի նշեր: «Թեհրան այս հարցին մէջ իրեւ թիրախ կ'ընտրէ թոյլ կողմը, այսինքն՝ Ազրպէյճանը», յայտնած է ան:

Ազրպէյճանական նաւերու տեղաշարժին իրեւ պատասխան, իրան կասպից Սոփուլ մէջ հանած է «Պէյկան» անուամբ հրթիռանաւ՝ յայտարարելով, որ նաւը պիտի պաշտպանէ իրանի շահերը: «Իրանի այս քայլը լուրջ վտանգ է մեր ձկնապետ բոլոր երկիրներուն համար եւ Պաքու բաւարար ուժ ունի պաշտպանելու իր ծովային սահմանները», յայտարարած է Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Եւրազ Մանուչեանը:

ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԸՆԾՐԱԿԱՆ ԱՌՈՐԵԱՅԷՆ

ՄԻԱՍԵՌԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՉՕՐԱԿՅԻՆ ԱԼԻ ՔԵՐԻՍԼԻԻ

Ազրպէյճանի սեռային փոքրամասնութիւններու ներկայացուցիչները խումբ մը վերջերս բողոքի ցոյց մը կազմակերպած է Ազրպէյճանի նախագահութեան թեկնածու, Նոր Մուսաւաթ կուսակցութեան ղեկավար Հաֆիզ Հաճիբեի նախընտրական աշխատախումբի կեդրոնին մօտ: Հաճիբե, որ Ազրպէյճանի քրէական շրջանակներուն մէջ տիրական դէմք մըն է եւ նախապէս դատապարտուած է, այդ շրջանակներուն մէջ ճանչցուած է նաեւ «Ձուկ» անուանումով:

Կիրններուն համար եւ Պաքու բաւարար ուժ ունի պաշտպանելու իր ծովային սահմանները, յայտարարած է Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Ռամիզ Մեխրիբով՝ իրեւ հակազդեցութիւն իրանի վերոյիշեալ քայլին:

ԱԼԻ ՔԵՐԻՍԼԻ




Ալի Քերիմլի

«Ռեկոնստրուկցիոն» լրատու գործակալութեան համաձայն, ցուցարարները «Ձուկ»էն պահանջած են, որ այս անգամ իր ելոյթներուն մէջ չիշխատակէ նախագահութեան թեկնածու Ալի Քերիմլիին անունը, գոր Հաճիբե կը նկատէ «միասնական»:

Սեռային փոքրամասնութիւններու ներկայացուցիչները նշած են, որ Հաճիբեի այդ քայլով կ'ոտնահարուին իրաւունքները իրենց եւ Ալի Քերիմլիին, որ, ըստ ցուցարարներուն, «իրենցմէ է»:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՆՈՒԼԻՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ



Պուրկարիոյ Հին եւ գլխաւոր համայնքներէն է Սոփիայի հայ գաղութը. հայեր հոն գացած եւ բնակութիւն հաստատած են միջին դարերէն սկսեալ. հետագային, ժ.Ձ. - ժ.Է. դարերուն մեծ թիւով գաղթականներ ապաստան գտան հոն, եւ կառուցուեցաւ եկեղեցի: Գաղթածախը ստուարացաւ ռուս-թրքական 1877-1878ի պատերազմէն եւ Պուրկարիոյ անկախութենէն ետք, եւ այնուհետեւ՝ Ա. Աշխարհամարտէն ետք:

ՍՈՓԻԱ


Սոփիա, Պուրկարիոյ մայրաքաղաքը, կը գտնուի Պալքանեան թերակղզիին կեդրոնական գոտիին մէջ, Սոփիա գոգաւորութեան հարաւային ծայրամասին, որ լայնաորով հովիտ մըն է երկրին արեւմուտքը:

Թրակեան Սերտի (Սարտի) ցեղախումբը՝ Ք. Ը. դարուն բնակավայր հաստատեց հոն. հռոմէացիքը՝ Ք. 19ին գրաւեցին այդ բնակավայրը եւ զայն կոչեցին Սերտիքա (յուսուրէն՝ Սարտիքա): Այնուհետեւ անիկա սկսաւ զարգանալ, իսկ Կոստանդին Ա. Մեծ կայսեր օրով բարեկարգ քաղաքի վերածուեցաւ: 342ին կամ 343ին Սարտիքա եպիսկոպոսներու կեդրոն դարձաւ: 441 - 447 տարիներուն շրջանը հոն երու յարձակումներուն ենթարկուեցաւ: Բիւզանդական ազդեցութիւնը ամրապնդուեցաւ Յուստինիանոս կայսեր ժամանակ, Ձ. դարուն. կառուցուեցաւ Սուրբ Սոփիա եկեղեցին, որուն անուսով ալ ճանչցուեցաւ քաղաքը: Պուրկարներու Բրուսիանը 809ին գրաւեց զայն եւ միացուց Պուրկարիոյ պետութեան: Սոփիա 1018ին կրկին բիւզանդական տիրապետութեան տակ անցաւ, մինչեւ որ 1185ին հաստատուեցաւ Պուրկարիոյ կայսրութիւնը:

Օսմանցիք 1382ին գրաւեցին Սոփիան եւ Ռուսիայի օսմանեան կառավարիչին՝ պէյլիպպէ-կիին կեդրոնին վերածեցին: ժ.Ձ. - ժ.Է. դարերուն անիկա Պալքանեան թերակղզիի առեւտուրի եւ մշակութիւնի կարեւոր կեդրոններէն դարձաւ: 4 Յունուար 1878ին Սոփիա ազատագրուեցաւ օսմանեան լուծէն եւ 3 Ապրիլ 1879ին Պուրկարիոյ մայրաքաղաք հռչակուեցաւ:

Սոփիա Պուրկարիոյ ճարտարարուեստին գլխաւոր կեդրոնն է, ուր կեդրոնացած են յատկապէս ծանր ճարտարարուեստի ճիւղերը՝ մետաղամշակում, մեքենաշինութիւն, ելեկտրական, քիմիական եւ հիւսուածեղէնի արտադրութիւնները:

Երկրագործական հարուստ գոտի ըլլալով՝ Սոփիայի շրջանը կ'արտադրէ պտուղներ եւ



բանջարեղէն, որոնք կը բաւարարեն տեղական պահանջները եւ կ'արտածուին շրջակայ քաղաքներ: Սոփիա նաեւ Պուրկարիոյ երկաթուղիի ու օդային երթեւեկի կեդրոնն է:

Սոփիայի մէջ պահպանուած են հին հռոմէական կառոյցներու մնացորդներ: Կրթական գլխաւոր հաստատութիւններն են՝ Պուրկարական Գիտութիւններու ակադեմիան, Երկրագործական Գիտութիւններու ակադեմիան եւ Սոփիայի համալսարանը (հիմնուած՝ 1888ին): Հոն կը գտնուին կիւրեղ եւ Մեթոտիոս մատենադարանները, «Իվան Վազով» ազգային թատրոնը եւ օփերայի տունը. կան թանգարաններ: Պատմական արժէք ներկայացնող եկեղեցիներ են՝ Ս. Սոփիա, Ս. Գէորգ եւ Պոյանա, նաեւ՝ երկու մզկիթներ, իսկ Ալեքսանտր Նեւսքի տաճարը կառուցուած է պուրկարացի ժողովուրդէն իրրեւ երախտագիտութիւն ռուս ժողովուրդին ռուս ազատարարներու յիշատակին, 1878ին: Քաղաքը ներկայիս 1,2 միլիոն բնակիչ ունի:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՀԵՏՔԵՐ ՍՈՓԻԱՅԻ ՄԷՁ

Սոփիայի մէջ հայերու մասին ամէնէն հին յիշատակութիւնները կ'ընթան մինչեւ ժ.Ա. - ժ.Բ. դարեր. այդ ժամանակ Բիւզանդիոնի կայսրերուն կողմէ Հայաստանէն բռնագաղթուած եւ սահմաններու ապահովութեան համար կայսրութեան ծայրամասերուն՝ Թրակիոյ ու Մակեդոնիոյ մէջ եւ Գանուբի փոխարէն բնակեցուած հայերէն ոմանք հոն կեդրոնացած են: Հաւանա-

ՊՈՒԿԱՐԱՇԱՅ ԳԱՂՈՒԹՆԱՆ ՍՈՓԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ ԵՒ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ՝ ՄԻՆՉԵՒ ԺԹ. ԴԱՐ

բար անոնք ընդհանրապէս պաշտօնականներ էին, որովհետեւ պուրկարական պաշտօնական նամակի մը մէջ կոչ կ'ուղղուէր շրջանի ուղղափառ եկեղեցւոյ եպիսկոպոսին պայքարելու անոնց դէմ՝ իրրեւ հերձուածողներ: Կային նաեւ հայ եկեղեցւոյ հետեւորդներ, որոնք իրենց եկեղեցին եւ հոգեւորականները ունէին Սոփիա-Տիվալիա շրջանին մէջ:

Սակայն այս ժամանակաշրջանի հայութեան, հայ կեանքին եւ եկեղեցւոյ մասին հաւաստի տեղեկութիւններ եւ զբաւոյր յիշատակարաններ կը պակասին:

ՀԱՅԵՐ՝ ՕՍՄԱՆԵԱՆ ԳՐԱՒՈՒՄԸ ԵՏՔ

Օսմանցիք 1382ին գրաւեցին Սոփիան, որ այդ ժամանակ փոքր բերդաքաղաք մըն էր: Գրաւումէն ետք օսմանցի գորավարներ Մուրատ փաշա եւ Գարաճա բէկ Սոփիայի շրջանին վերաբերեալ տեղեկագիր մը պատրաստեցին եւ զրկեցին սուլթանին. իրենց զեկուցումին մէջ անոնք բաւական մանրամասն տեղեկութիւններ հաղորդած են շրջանին պուրկար բնակչութեան մասին, բայց հայերու մասին ոչ մէկ յիշատակութիւն ունին, ինչ որ ցոյց կու տայ, որ այդ ժամանակ կամ հայեր չկային հոն, կամ ձուլուած էին եւ կամ ալ չափազանց աննշան եւ փոքր թիւ մը կը ներկայացնէին:

Գերմանացի ճանապարհորդներ Հանս Տերնշվամ՝ 1553ին, Վուլֆկանկ՝ 1559ին եւ Շթեֆան



Կեռլաճ՝ 1573ին իրենց ճանապարհորդագրութիւններուն մէջ յիշատակութիւններ պահած են Սոփիայի հայերուն մասին, որոնք համաձայն, մտաւորապէս հազար հայեր կը բնակէին հոն: Հաւանաբար անոնք արհեստաւորներ եւ առեւտրականներ էին, որոնք օսմանեան գրաւումէն ետք հոն հաստատուած էին:

ԳԱՂՈՒԹՆԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻԿԱՆ ՀԱՅԵՐԵՐ ԵՒ ԱՂՈՒԹՆԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԱՆ

Սոփիայի հայ համայնքը ստուարացաւ ժ.Ձ. դարու վերջաւորութեան եւ ժ.Է. դարու առաջին տարիներուն՝ 1606ին մինչեւ 1610, երբ Հայաստանի մէջ ծայր առած ճախլիներու ազդեցութեան, խժոճութիւններուն ու հարստահարութիւններուն, ինչպէս նաեւ թուրք-պարսկական պատերազմներուն բերումով մեծ թիւով հայեր իրենց տունն ու տեղը ձգելով փախուստի դիմեցին եւ անոնցմէ ոմանք Պալքանեան թերակղզի մտնելով՝ Սոփիայի եւ շրջակայքին մէջ ապաստան գտան: Արեւմտեան Հայաստանի գիւղերէն հասնող այդ գաղթականներուն եկան միանալու Կաֆայի եւ Վառնայի ճամբով Սոփիա հասնող գաղթականներ, որոնք մեծամասնութեամբ Արարատեան դաշտէն եւ Նախիլեւանէն էին, գլխաւորաբար՝ Շոռոթ, Վահրեա եւ Ազարակ գիւղերէն: Այդ գաղթականներէն ոմանք հասան մինչեւ Պելկրատ, իսկ հարիւր ընտանիք ալ 1610ին Փլովտիւի մէջ հաստատուեցաւ:



Այս ժամանակաշրջանի գաղթականներուն մասին տեղեկութիւններ հաղորդած է ճանապարհորդ Եոհան Վիլտ, որ 1605ին անցած է Սոփիայէն դէպի Պոլիս ուղեւորութեան ճամբուն վրայ. սակայն ան Սոփիայի հայերուն մասին որեւէ թուաբանակ չէ յիշած: Գրիգոր Դարանաղցի իր ժամանակագրութեան մէջ, գրուած՝ 1619ին, յիշատակութիւն պահած է Սոփիայի հայերուն մասին:

Սոփիայի հայութեան հոգեւոր հովիւ դարձաւ Տէր Յակոբ քահանայ. անոր զաւակը՝ Մըկըր (Մըկրտիչ) Յակոբեան իր անձնական միջոցներով Ռալիցա անունով տեղացի քրիստոնեայէ մը 1620ին քսան հազար փարայի գնեց հողամաս մը, ուր կային զանազան շինութիւններ ու ծառաստաններ: Այդ հողամասը կը գտնուի ներկայ Յայր Գալոյան փողոցին վրայ: Այդ հողաշերտին վրայ Սոփիայի հայերը միասնական ջանքերով աղօթատեղի մը շինեցին: Հաւանաբար այդ թուականէն առաջ ալ համայնքը փոքր աղօթատեղի մը ունեցած է այդ նպատակով պատշաճեցուած տան մը մէջ:

Սոփիայի հայոց աղօթատեղին եղած է շատ փոքր, պարզ ու համեստ, քիչ մը գետնափոր ու առանց զանազան տունի, նկատի ունենալով իսլամական օրէնքի՝ շարիաթի պահանջած սահմանափակումները քրիստոնեայ եկեղեցիներուն նկատմամբ: Որմանակարներ ու սրբապատկերներ հազիւ նշմարելի էին աղօթատեղիին մէջ, բայց կային եկեղեցական սպասներ ու գիրքեր՝ եկեղեցական արարողութիւններու ու ժամերգութիւններու համար:

Պուրկար կաթոլիկ եպիսկոպոս Փեթըր Պոկտան Պակչիչ, որ կրօնական առաքելութեան մը համար 1640ին Սոփիա այցելած է, կը յիշէ, որ հայ երկու հարիւր ընտանիքներ (մօտաւորապէս 1200 - 1400 հոգի) կը բնակին քաղաքին մէջ: Ան կ'աւելցնէ՝ ըսելով, որ հայերը իրենց եկեղեցիները ունին եւ կը պատկանին երկու հակամարտ իմբակցութիւններու: Այս հաստատումին համաձայն, ուրեմն հաւանաբար հռոմէադաւան հայեր ալ կային Սոփիայի մէջ:

Սոփիայի հայերը օսմանեան իշխանութիւններէն պաշտօնապէս ճանչցուած էին իրրեւ ազգային եւ կրօնական համայնք՝ էրմէնի թայֆասը վէ 66մաթ: Անոնք ընդհանրապէս արհեստաւորներ էին, յատկապէս՝ ոսկերիչ, հացագործ եւ ձուլագործ: Զուլագործները իրենց առանձին համարութիւնը՝ էսնաֆը ունէին, որուն ղեկավար քահանայ Վարդազարմեան անունով վարպետն էր, իսկ անոր օգնականը պուրկար վարպետ մըն էր՝ Պոթէու Փոփ Փեթըրով: Իսկ հացագործներու էսնաֆին ղեկավարը, 1669ի տուեալներուն համաձայն, Յովհաննէս անունով վարպետն էր, որ Պուրկար թաղամասին մէջ կը բնակէր:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻԿԱՆ

Սոփիայի հայերը 1673ին դիմեցին Ապրո Չեւեպիի, եկեղեցի ունենալու համար: Իր կարգին, Ապրո Չեւեպի դիմեց սուլթանին եւ յաջողեցաւ Ֆերման մը ձեռք ձգել, որուն հիմամբ Հայկական թաղին՝ էրմէնի մահալէսիին մէջ, որ ներկայ կրաֆ Իկնաթիեւ Ալպային, Կուրքօ եւ Լեւսքի փողոցներուն միջեւ կը պարփակուէր, կառուցուեցաւ Սուրբ Աստուածածին եկեղեցին:

Եկեղեցւոյ հովիւը եղաւ Տէր Յուսէն (Յովհանն) քահանայ, որուն մասին կաֆայի Մարտիրոս վարդապետ 1673ին հետեւեալը գրած է.

«Անուց կոչեց իւրեան Յուսէն, Ի հաւատոյ դատարկ 'ու ունայն, Զօրց ի բուն շրջի ի մեխանցան, Տղմաբաւալ խոզի ցմանց»:

Այս տաղարանին համաձայն, Տէր Յուսէն քահանայ գինեմուլ, հաւատքով դատարկ եւ ունայն, եւ փոխանակ եկեղեցին մնալու, օրն իրուն մեխանայները շրջող կրօնաւոր մըն էր:

ՍՈՓԻԱՅԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ԺԵ. ԳԱՐՈՒ ՎԵՐՁԱՒՈՐՈՒԹՅՆԸ ԺԹ. ԴԱՐ

Սոփիայի հայ համայնքը սկսաւ տկարանալ 1670ական տարիներէն ետք: Մանաւանդ երբ կամ ինչէնէն 1675ին մեծ թիւով գաղթականներ փոխաբերուին մէջ բնակութիւն հաստատեցին, Սոփիայի հայերէն շատեր, իրրեւ հայաշատ կեդրոն, հոն փոխադրուեցան: Սակայն այնուհետեւ, համայնքը վերաշիտեցաւ, երբ Ակնայ Ապուլչիւ

գիւղէն գաղթականներ 1700ական տարիներուն սկիզբը Սոփիայի մէջ բնակութիւն հաստատեցին:

Այս ժամանակներէն հայոց եկեղեցւոյ բակին մէջ պահպանուած են ութ տապանաքարեր: Այլ տապանաքարեր ալ՝ Սոփիայի մօտակայ Տրակալեցի եւ Պոյանա գիւղերուն մէջ, եւ 1711 թուականով շիրմաքար մըն ալ՝ Սոփիայի հայոց գերեզմանատան մէջ: Եկեղեցւոյ բակին մէջ պահպանուած ութ տապանաքարերէն ընթեռնի




մնացած են երեքը. հետաքրքրութեան համար յիշենք զանոնք.

Նալեցարուք ծնունդ յ'երկրի Ի սուց տապանս որ տեսանի Եղիպ կայ աստ ի պահեստի Մարմին առնք բարեպաշտի Սա էր երկրէն Նախիլեւանցի Տօյօնց Աւետիքի որդի Մատուրի Որ փոխեցաւ առ Աստուած Ի թվին Ռ. Ճ. 2. Թ. Սեպտ. ԺԲ. (1730, Սեպտ. 12)

Այս է տապան հանգստեան Շոռօթեցի Եւփրոմեցի Աւետիքի որդի Ալեքսանդրի Որ փոխեցաւ ի թվին ՌՄԲ Դեկտեմբեր ամսու ԻԲ (1753 Դեկտ. 22)



Այս է տապան հանգստեան Կանանդուի որդի հանգուցեալ Օյանցեպի, որ փոխեցաւ աստեց 'ի կեանս թվին հայոց Ռ. Մ. Կ. Գ. Յուլիս ԺԵ. ից (1814 Յուլիս 15)



Սոփիայի հայերը մինչեւ այդ ժամանակ մեծ մասամբ արհեստաւորներ էին. կային նաեւ քանի մը վաճառականներ: Համայնքը մինչեւ 1830ական տարիները պահեց իր գոյութիւնը եւ յետոյ անչքացաւ, մինչեւ որ գաղթականական նոր հոսանքներու բերումով վերակենդանացաւ 1880ական տարիներուն:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ԺԱՆ ՀԱՄԱՄԻ ՀԵՏ



Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային վարչությունը հանդիպում մը ունեցաւ պատրաստողի ֆեդերասիոնի նախագահ Ժան Համամի հետ, ֆեդերասիոնի կեդրոնատեղիին մէջ:

Աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպումը եղաւ շատ ջերմ եւ մանաւանդ շինիչ: Ֆեդերասիոնի նախագահը գործակցութեան լայն ոգի ցուցաբերեց Հ.Մ.Ը.Մ.Ի նկատմամբ եւ սիրով ընդառաջեց Շրջանային վարչութեան քանի մը խնդրանքներուն:

Ժան Համամը դրուատեց Հ.Մ.Ը.Մ.Ի ներդրումը ընդհանրապէս Լիբանանի մարզական կեանքին մէջ, վեր առնելով նաեւ անոր կազմակերպական մեծ ներուժը: Ան խոստացաւ շարունակել գործակցութիւնը եւ կարելի եղած չափով սատարել պատրաստողի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի վերելքին:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

Լիբանանի ֆուտպոլի ֆեդերասիոնը վաւերացնելէ ետք Ա. հանգրուանի մրցումներուն արդիւնքները, փոքր փոփոխութիւն մը կատարեց շաբաթավերջին տեղի ունենալիք մրցումներուն դիմով (տեսնել՝ ստորեւ):

Ա. հանգրուանի մրցումներուն, եղանակի իրենց աւազին քարտը ստացան հետեւեալ մարզիկները: Հրոնէյն Մուսթաֆա (Մալտ), Ամին Ալիու (Աճա), Հրոնէյն Ֆաբի, Ալի Սաատ Էճ-Բ-Մ.), Երոնէյն Պալապաթ, Իիւն Իսա (Օլիմպիկ), Փոյ Ռոսթոմ (Մաժէ), Հրոնէյն Մալէք (Թատամոն Սուր), Մատիո Քոնաթի (Մապար), Սէմի Շուս, Տէնի Նազալ (Անսար) եւ Նըւրը Իպրահիմ (Մաֆա):

Նըսմէյն, Հ.Մ.Ը.Մ.Ի-էն եւ Շապապ Սահէյնի ունէ մարզիկ դեղին քարտ չստացաւ:


Իսկ 2003 - 2004 եղանակի առաջին կարմիր քարտ ստացած Իպրահիմ Համմուս (Հ.Մ.Մ.) մէկ մրցումով կախակայուեցաւ ֆեդերասիոնին կողմէ:

Ստորեւ՝ Բ. հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՈՒՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Նըսմէ - Սալամ	8:30	Մարզական Աւան
ՇԱԲԱԿԱՆ 11 ՀՈՎՏԵՄԲԵՐ		
Շապապ Սահէլ - Թատ. Սուր	4:00	Մարզական Աւան
Ահտ - Մապար	4:00	Ահտ
Օլիմպիկ - Հ.Մ.Ը.Մ.	8:30	Սալտա
ԿԵՆՏՐՈՆԻ 12 ՀՈՎՏԵՄԲԵՐ		
Սաֆա - Հ.Մ.Մ.	4:00	Սաֆա

ԹԵՆԻՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱՒՈՐՄԱՆ ՄԵՋ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ՝ 9ՐԴ, ՍԱՐԳՍԵԱՆ՝ 40ՐԴ



Թենիսի միջազգային ֆեդերասիոնին կողմէ հրապարակուած այս շաբթուան տղոց նոր դասաւորման մէջ, Սարգիս Սարգսեան կը գրաւէ 40րդ դիրքը: Ան իր ուսումը կը պարտի անցեալ շաբաթավերջին Մոսկուայի մէջ տեղի ունեցած Քրեմլինի բաժակի մրցաշարին աւարտականին հասած ըլլալուն շնորհիւ:

Արժանիքնախալ Դաիթ Նալպաստեան կը գրաւէ 9րդ դիրքը:

ԹՈՒՐԵԻԱ - ԱՆԳԼԻԱ ՃԱԿԱՏՈՒՄԸ՝ ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐՈՒ ՏԱԿ

Շաբաթ, 11 Հոկտեմբերին, Եւրո - 2004ի մրցաշարին տեղի պիտի ունենան քսան մրցումներ, որոնցմէ ոմանք պիտի ըլլան ճակատագրական:

Վստահաբար անոնց կարգին պիտի ըլլայ Է. Խամբակէն ներս կայանալիք մրցումը՝ Թուրքիոյ եւ Անգլիոյ միջեւ, որ տեղի պիտի ունենայ Պոլսոյ մէջ, անգլիացի համակիրներուն բացակայութեան:




Ֆերտինան

Անգլիոյ խումբին շուրջ տացի մարզիկը՝ Սվէն Կորան Էրիքսոն, որ երէկ հրապարակեց իր մարզիկներուն անունները, իր կազմէն դուրս ձգեց իր

տի Լիծէն միացաւ Մանչեսթըրի:

Թուրքիոյ դէմ մրցումին, Ֆերտինանտի փոխարէն Էրիքսոնը նկատի առաւ Արսենալի նախկին յետստ-

ուներնալով Տէյվիտ Պեք-Տամը: Շաբաթակիցին, Օուլըն ենթարկուեցաւ քննութիւններու, որմէ ետք բժշկները յայտնեցին, որ ան Թուրքիոյ դէմ տեղի ունենալիք մրցումին պիտի ըլլայ բաւական ապաքինած:



Օուլըն

հիմնական յետստպահներին՝ Ռիօ Ֆերտինանտը: Պատճառը՝ Ռոմիշե-աւ. Մանչեսթըր Եւրոպայի թրախ մաս կազմող ֆերտինանտ անցեալ ամիս (Սեպտեմբերին) մերժեց եւ թարկուելով բժշկական քննութիւններու՝ խթանիչ ղեկորու գործածութեան համար:

պահ Մէթիու Ափսընը (այժմ՝ Պլիմուտիցի): Անոր փոխարէն տեղապահ կողմէ նկատի առնուած մարզիկները:



Քոլինս

Մալքը Օուլընի, Էրիքսոնը ըսաւ, որ վստահ է, որ ան դաշտ պիտի ներկայանայ այդ մրցումին, իր կողմին:

Բերդապահները՝ Տէյվիտ Տէյմս (Ուելս շամ), Փոյ Ռոպինսոն (Լիծ) եւ Իան Ուոլթըր (Լայպսթըր Սիթի):

Յետստպահները՝ Կէրի Նեւիլ, Ֆիլ Ափսըն (Պրիմիւնիզի), Սոլ Բէյմպլ (Արսենալ), Ճոն Թեքի, Ուէյն Պրիս (Չելսի), Էշլի Քոլ (Արսենալ) եւ Տէնի Միլս (Միտլըզպորթ):

Միջնապահները՝ Տէյվիտ Պեք-Տամ (Ռէյլ Մատրիտ), Նիքի Պաթ, Փոլ Սքոլզ (Մանչեսթըր Եւրոպայ), Սթիւարտ Փերար (Լիվըրպոլ), Օուլըն Հարկըյիվ (Պալմերսթոն Միլս), Ֆրանք Լամփար (Չելսի), Քիերըն Ռայլը (Նիւքասլ) եւ Ճո Բոլ (Չելսի):

Յառաջապահները՝ Էմիլ Հէյքս, Մալքը Օուլըն (Լիվըրպոլ), Ուէյն Տոնի (Էվըրթոն) եւ Ճէյմս Պէթի (Սաութհէմթոն):

ԵՒՐՈՊԱՅԻ ԿՈՒՍՔՈՐԸՐՆԵՐՈՒՆ ԴԱՍԱՒՈՐՈՒՄԸ

Անցեալ շաբաթավերջին տեղի ունեցած եւրոպական ֆուտպոլի ախոյեանութեան մրցումներէն ետք, այժմ Սպանիոյ, Իտալիոյ (Քալչիո), Անգլիոյ եւ Գերմանիոյ (Պոլսի) կողմերէն ընտրուած շաբաթուան յայտագիրը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

(Մանչեսթըր Սիթի), Ճէյմս Պէթի (Սաութհէմթոն), Թիերի Հանրի (Արսենալ), Էլըն Շիրըր (Նիւքասլ) եւ Թէտի Շիրիսկի (Փորթսմուտ) ճակատին կը:

●ՊՈՒՆՏՆԱԿԱՆ 1.- Մարթին Մաքս (Հանպա Ռոսթըր) եւ 2.- Միկելո-Բիլիոպի (Վոլֆսպորթ) եւ Թոմաս Բրիսթոլ (Հանպա Ռոսթըր) 96 ճակատին կը:

- ՍՊԱՆԻԱ
 - 1.- Ռոպըր Փանտանի (Տեփոթիս Բորնիս) 6 կը
 - 2.- Ռոնալտո (Ռէալ Մատրիտ) 5 կը
 - 3.- Սալո Միլոշեւիչ (Սեւիլա Վիլ) 4 կը
- ԵԱՒՉԻՕ
 - 1.- Ատրիանո (Փարմ) եւ Անտոնի Շեվչենքո (Ա.Սէ. Միլան) ճակատին կը
 - 2.- Տաիտ Թրեպակէ եւ Մարքո Տի Վայո (Եուվենթուս) 4 ճակատին կը
- ԱՆԳԼԻԱ
 - 1.- Ռուս Կան Նիպըր (Մանչեսթըր Եւրոպայ) 8 կը
 - 2.- Մալքը Օուլըն (Լիվըրպոլ) 7 կը
 - 3.- Նիքոլա Անելքա

ԱԼԷՆ ՊՕՂՈՍԵԱՆ ԿԸ ԼԲԷՏ ՖՈՒԹՊՈՒԼԸ

1998ի Մոնտիպիլին, Ֆրանսայի ֆուտպոլի ազգային խումբին հետ աշխարհի ախոյեան հանդիսացած Ալէն Պոլոսեան, որոշեց լքել ֆուտպոլիստի իր ասպարէզը: Ֆրանսայի ֆուտպոլի ազգային խումբին հետ 26 միջազգային մրցում կատարած եւ 2 կոլ նշանակած 32 տարեկան Պոլոսեան ըսաւ. «Որոշեցի ֆուտպոլը լքել, որովհետեւ իսպառու ախորժակս «մարեցաւ»: Այսուհետեւ ղեկ ղեկ ֆուտպոլի աշխարհէն ընդհատուած եմ եւ ապագային կ'ուզեմ այլ պաշտօն մը ստանձնել»:

Վերջին անգամ Ֆրանսայի շապիկը Մալտ 2002ին կրած Պոլոսեանի վերջին ախորժակը հանդիսացաւ Էսփանիոլ (Սպանիա) կողմէ, որուն անոր պայմանագրութիւնը աւարտեցաւ անցեալ Օգոստոսին: Վերջինը ըլլալով, ան իր ախորժակին հետ միայն հինգ անգամ դաշտ ներկայացաւ:

Էսփանիոյնի բացի ան մաս կազմած է Մարսէլի, Նափոլիի, Սամպորիայի եւ Փարմայի: Վերջինին հետ ան շահեցաւ Իտալիոյ բաժակը եւ Եւրո. Է. Է. Ֆ. Ա. Ի մրցաշարը (1999):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՍՄԵՏԵՆ ԿԸ ՊԱՐԳԵԻՍՏԻԸ ՆԱԽԱԳԱՅ ԲՈՉԱՐԵԱՆԸ

Միջազգային Ողիմպիական կոմիտէն Լոպանի մէջ իր գումարած ժողովին որոշեց ոսկիէ շքանշանով պարգևատրել Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանը:

Ողիմպիականի այդ տիտղոսին, որ կը նկատուի ամենէն բարձր, ցարդ միայն քանի մը երկիրներու նախագահներ արժանացած են:

Իր խօսքին մէջ Ողիմպիականի նախագահ Ժաք Ռոկ շնորհաւորեց նախագահ Քոչարեանը՝ մարզական աշխարհին մէջ իր մատուցած մեծ ծառայութիւններուն համար:

ԵՒՐՕ - 2004. ՉՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱՐՔ

Եւրո - 2004ի ֆուտպոլի գտումի մրցաշարին աւարտին մնացած է մէկ հանգրուան միայն, որմէ ետք կը յստականան Փորթուգալի իրենց տոմար ապահովող խումբերուն անունները:

Ցարդ, միայն չորս խումբեր՝ Ֆրանսա, Չեխիա, Շուէտ եւ Պոլսկարիա ապահոված են իրենց դիրքերը, նախքան վերջին հանգրուանի մրցումները, որոնք տեղի պիտի ունենան այս շաբաթավերջին:

Անոնց պիտի միանան վեց այլ խումբեր իրենց արձանագրած յաղթանակներուն շնորհիւ պիտի գրաւեն իրենց խմբակներուն պարագլուխի դիրքերը:

Մինչ մնացեալ տասը խմբակներուն պարագլուխ, իւրաքանչիւր խմբակի երկրորդ դիրքը գրաւողները իրարու հետ փլէյօֆի մրցումներ պիտի կատարեն (երթուգարձի դրութեամբ), որմէ ետք անոնց թիւը պիտի ամբողջանայ (15): 16րդ խումբը պիտի ըլլայ մրցաշարը հիւրընկալող երկիրը՝ Փորթուգալ:

Նշենք, թէ երթի մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ Նոյեմբեր 15ին եւ 16ին, իսկ դարձի մրցումները՝ Նոյեմբեր 18ին եւ 19ին:

Ստորեւ՝ տասը խմբակներուն պատկերը (զլխագիրով նշուած խումբերը ապահոված են իրենց տոմսերը). Ա. խմբակ - ՅՐԱՆԱԱ. փլէյօֆ՝ Սլովենիա

Բ. խմբակ - Առաջին՝ Ռուսիա, Գանիա կամ Պոնտիա եւ կամ փլէյօֆ

Գ. խմբակ - Չեխիա. փլէյօֆ՝ Հոլանտա

Դ. խմբակ - Շուէտ. փլէյօֆ՝ Լատվիա, Լեհաստան կամ Հունգարիա

Ե. խմբակ - Առաջին՝ Գերմանիա կամ Իսլանտա, փլէյօֆ՝ Գերմանիա, Սկոտլանտ կամ Ալբեր

Զ. խմբակ - Առաջին՝ Յունաստան կամ Սպանիա եւ կամ փլէյօֆ

Է. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Ը. խմբակ - ՊՈՒԼԿԱՐԻԱ. փլէյօֆ՝ Պելճիքա կամ Խրուսթիա

Թ. խմբակ - Առաջին՝ Իտալիա կամ Կալէս եւ կամ՝ փլէյօֆ

Ճ. խմբակ - Առաջին՝ Ռուսիա, Զուիցերիա կամ Ալբեր եւ կամ փլէյօֆ

Կ. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Լ. խմբակ - ՊՈՒԼԿԱՐԻԱ. փլէյօֆ՝ Պելճիքա կամ Խրուսթիա

Ս. խմբակ - Առաջին՝ Իտալիա կամ Կալէս եւ կամ՝ փլէյօֆ

Զ. խմբակ - Առաջին՝ Ռուսիա, Զուիցերիա կամ Ալբեր եւ կամ փլէյօֆ

Է. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Ը. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Թ. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Ճ. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Կ. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Լ. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Ս. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Զ. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Է. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Ը. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

Թ. խմբակ - Առաջին՝ Անգլիա կամ Թուրքիա եւ կամ փլէյօֆ

●ՍՏՐՈՒԹՅԱՆ Շաբաթ, 11 Հոկտեմբերին տեղի ունենալիք քսան մրցումներուն ամբողջական յայտագիրը (ժամերը՝ Պէլլութի ժամանակացոյցով):

Ա. խմբակ	ԺԱՄ
Կիպրոս - Սլովենիա	20:30
Ֆրանսա - Իսրայէլ	21:45
Բ. խմբակ	
Պոնտիա - Գանիա	21:00
Նորվեգիա - Լուքսեմպուրկ	21:00
Գ. խմբակ	
Աւստրիա - Չեխիա	18:00
Հունգարիա - Սլովակիա	21:30
Դ. խմբակ	
Շուէտ - Լատվիա	18:00
Հունգարիա - Լեհաստան	18:00
Ե. խմբակ	
Գերմանիա - Իսլանտա	18:00
Սկոտլանտ - Լիբանան	18:00
Զ. խմբակ	
ՀԱՅԱՍՏԱՆ - Սպանիա	19:00
Յունաստան - Հիւսիսային Իրլանտա	19:00
Է. խմբակ	
Թուրքիա - Անգլիա	21:00
Լիթւոնիա - Սլովակիա	21:00
Ը. խմբակ	
Պելճիքա - Էսթոնիա	21:15
Խրուսթիա - Պոլսկարիա	21:15
Թ. խմբակ	
Իտալիա - Ազրբայճան	21:45
Կալէս - Սերբիա	21:45
Ճ. խմբակ	
Ռուսիա - Ալբեր	18:30
Ռուսիա - Վրաստան	18:30

ՊԻՏԻ ՃՁՄԵՄ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՆԵՐԸ

ԿՐԸԷ ԲԱՏԻՐՈՎ

ՄՈՍԿՈՒՍ, 7 (ԱՅՓ). - Չեչենիոյ նորընտիր նախագահ Ահմէտ Բատիրով Երեքշաբթի օր յայտարարած է, թէ անգուր կերպով պիտի ձգուի անջատողական ուժերը, մինչ Մոսկուա մերժած է ընտրութեան գծով միջապգային քննադատութիւնները ընդունիլ:

Բատիրով Կիրակի օրու ընտրութիւններուն ջախջախիչ յաղթանակ մը ապահոված է, թէն մարդկային իրաւանց խմբակներ պանոնք «խեղկատակութիւն» կոչած են, իսկ միջապգային համայնքը քննադատած է պանոնք:

Ըստ Երկուշաբթի օր յայտարարուած նախնական արդիւնքներու, Բատիրով քուէներուն 81,1 առ հարիւրը ապահոված է:

Մ. Նահանգներ յայտնած են, որ ընտրութիւնները ժողովրդավարական չեն, թէն անոնք չեն ըսած, թէ ընտրութիւններուն արդիւնքները պիտի չճանչնան, իսկ ԵԱՀԿ քննադատած է թեկնածուներուն միջեւ ընտրանքի պակասը:

Նախագահ Վլատիմիր Փութինի Չեչենիոյ մէջ մարդկային իրաւանց պատասխանատուն՝ Ապտիլ Հաքիմ Սուլթիկով պնդած է, որ Բատիրովի ընտրութիւնը Չեչենիոյ մէջ խաղաղութեան հաստատման պիտի օժանդակէ:

Բատիրով ըսած է, որ Չեչենիոյ ներքին գործոց նախարարութեան ուժերը «այսօր կարողութիւնը չունին» առանձին լուծելու տագնապը եւ թէ ռուսական ուժերուն ներկայութիւնը տակաւին անհրաժեշտ է:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԱՇԼԻՃԸ ՏՈՒԱՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐ ԵՐԴՈՒՄԸ ԱՐԱՖԱԹԻ ԴԻՄԱՑ

Պաղեստինեան իշխանութեան ստիպողական վիճակի արտակարգ դահլիճի վարչապետ Ահմէտ Քորէյ եւ վեց նախարարներ երէկ պաշտօնապէս ստանձնեցին իրենց պարտականութիւնները, սահմանադրական երդումը տալէ ետք նախագահ Եասէր Արաֆաթի դիմաց: Արաֆաթ յաջողութիւն մաղթեց նախարարներուն, որոնց առաքելութիւնը դիրքին պիտի չըլլայ ներկայիս տիրող պայմաններուն տակ:

Երդումը կատարելէն անմիջապէս ետք, Քորէյ ըսաւ որ իր կառավարութեան առաջնահերթութիւնը պիտի ըլլայ երկրորդականի վիճակը մը իրագործել իսրայէլի հետ: Քորէյ ասելցուց, որ պատրաստ է «այսօր իսկ» բանակցելու իսրայէլի եւ անոր վարչապետ Արիէլ Շարոնի հետ: Պաղեստինցի վարչապետը շեշտեց, որ Շարոնի հետ տեսակցութիւն պիտի ունենայ երբ անհրաժեշտ ու օգտակար դառնայ այդ հանդիպումը: Քորէյ ասելցուց, որ ռեւէ մէկուն հետ բանակցելու պատրաստ է, որովհետեւ վեթո չէ դրած ռեւէ մէկուն դէմ:

Կառավարութեան կազմէն երկու նախարարներ ժառուտ թիպի եւ Նասէր Եուսուֆ երդման հանդիսութեան ներկայ չէին:




Առաջինը չէր կրցած կապուի Այսրյորդանան անցնելու արտօնութիւն ստանալ իսրայէլէն, իսկ երկրորդը՝ մերժած էր երդումը տալ, պահանջելով որ կառավարութիւնը նախ ապահովէ պաղեստինեան խորհրդարանին հաւանութիւնը: Եուսուֆի յանձնուած է ներքին գործոց նախարարութիւնը:

Միւս կողմէ, իսրայէլեան ուժերը երէկ 31 պաղեստինցիներ ձերբակալեցին Ժենիւնի մէջ: Բանակին մէկ բանբերը յայտնեց, որ ձերբակալուածները ծայրայեղականներ են, որոնք ենթադրաբար իսլամական ժիհադի հետեւորդներ են:

Պաղեստինեան սպահովութեան աղբիւրներ հաստատեցին, որ իսլամական ժիհադի 22 անդամներ ձերբակալուած են Ժենիւնի գաղթականացիներին մէջ:

Ռուսիա կոչ ուղղեց (ԱՅՓ)

ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԸ ԿԸ ԲԱԺՆԵԿՑԻՆ ԵՐԵՔ ԲՆԱԳԵՏՆԵՐ



ՄԹՈՔ ՀՈՒՄ, 7 (ԱՅՓ). - Բնագէտներ Ալեքսէյ Ապրիլեոսով (75 տարեկան), Վիթալի Կինզլով (87 տարեկան) եւ Անթոնի Լեկէթ (65 տարեկան) Երեքշաբթի օր ստացան բնագիտութեան Նոպէլեան 2003ի մրցանակը:

Ապրիլեոսով, որ ռուս-ամերիկացի քաղաքացի մըն է եւ Լեկէթ, որ բրիտանացի-ամերիկացի քաղաքացի մըն է, Մ. Նահանգներ կը բնակին, մինչ Կինզլովը, ռուս մը Մոսկուա կ'ապրի:

Երեք մրցանակակիրները 10 միլիոն շուէտական քրոնոր (1,11 միլիոն եւրօ) պիտի բաժնեկցին:

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՑԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ ՅՍՏԱԿ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ՝ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԲԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆԻԿՈՍԻԱ, 7 (ԱՅՓ). - Հոյանտայի վարչապետ Եան Փեթեր Պալընցեան Երեքշաբթի օր Նիկոսիոյ մէջ յայտնած է, թէ Թուրքիոյ պատասխանատուութիւնը Կիպրոսի 29 տարուան բաժանումից հարցը լուծել է. նախ քան Անգարայի Ե. Միութեան լիիրաւ մէկ անդամը դառնալը:

Անթրակիցներու շեշտած է, թէ «խնդրոյ առարկայ կողմերուն համար շատ կարեւոր է, որ Մայիս 1էն առաջ լուծուի մը գտնեն Կիպրոսի հարցին»:

Ան շեշտած է, որ Թուրքիա, ՄԱԿի եւ Ե. Միութեան կողքին «պէտք է տրամադիր ըլլայ» Կիպրոսի լուծումը մը գտնելու:

Միջազգային համայնքը Կիպրոսի երկու համայնքներէն կը պահանջէ, որ լուծումի մը յանգին նախքան կողմից Ե. Միութեան անդամակցութիւնը: Պալընցեան միւս կողմէ ընդգծած է նաեւ, որ Թուրքիա պիտի դատուի համաձայն Քոփենհագենի չափանիշներուն, որոնք կը պահանջեն Անգարայէն՝ մարդկային եւ փոքրամասնութեանց յարգելի իրաւունքները:

ԻՐԱՆ

ՔԱՆԱՏԱՑԻ ՆԿԱՐԻՉԻՆ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԿԱԱԻ

ԹԵՀՐԱՆ, 7 (ԱՅՓ). - Իրանի գաղտնի սպասարկութեան մէկ գործակալը՝ Մոհամէտ Ռիպա Աղուամ Ահմատի Թեհրանի մէջ Երեքշաբթի օր դատավարութեան ենթարկուեցաւ՝ իրանեան ծագումով քանատացի նկարիչ Չահրա Քապեմիի արգելափակման ընթացքին սպանութեան համար:

Շուրջ երկու ժամ տեւողութեամբ բացման նիստին, Ահմատի ամբաստանուած է «գրեթէ դիտումնաւոր սպանութեան մասնակցութեան յանցանքով», թէն դատախաչութեան ամբաստանութիւնը լոյս չէ սփռած Քապեմիի մահուան պայմաններուն շուրջ:

Դատախաչ ձաֆար Ռեշատարի նաեւ գաղտնի սպասարկութեան նախարարներու կարգ մը պաշտօնատարներ ամբաստանած է «ռճիրը ծածկել փորձելու» յանցանքով:

Ռեշատարի պահանջած է, որ գործակալը՝ համաձայն դատական օրէնքի, մէկէն երեք տարուան բանտարկութեան վճիռ կը ստանայ եւ եթէ պահանջուի, զոհին ընտանիքին արեան գին վճարէ:

Քապեմի ձերբակալուած էր Յունիս 23ին Թեհրանի Իվին բանտին առջեւ՝ առանց արտօնութեան նկարած ըլլալու յանցանքով, վարչակարգին դէմ ջուջարարներու շարք մը ձերբակալութիւններէ ետք:

ԻՐԱՆ ՄԱՐՏԱՀՐԱԲԵՐ Կ՝ՈՒՂՂԷ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՈՒԺՄԱՆԻԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԹԵՀՐԱՆ, 7 (ԱՅՓ). - Իրան Երեքշաբթի օր յայտնած է, թէ պիտի շարունակէ կորիչային ուժանիթի արտադրութեան համար անհրաժեշտ իրանիում հարստացնել, հակապղծելով ՄԱԿի Կորիչային Ուժանիթի Միջազգային գործակալութեան մէկ որոշումին, որ կը պահանջէ վերջ տալ այդ գործընթացին եւ Մ. Նահանգներու պնդանքներուն, թէ չի կրնար իր ուլած ձեւով վարուիլ ՄԱԿի գործակալութեան հետ:

Արտաքին գործոց նախարար Քամալ Խարապի ըսած է, թէ Իրան ռեւէ մէկու պիտի չարտօնէ՝ «մեզ վրէլ խաղաղ նպատակներու համար կորիչային ուժանիթի գործածութեան իրաւունքն է եւ յատկապէս՝ ուժանիթի մեր կեդրոններուն համար վառելանիւթ հարստացնելու մեր իրաւունքն»:

Խարապի շեշտած է, որ իսլամական հանրապետութիւնը «շատ վճռական է» նման գործունէութիւններու պաշտպանութեան գծով: Ուշիկըն ունի այն կասկածը, թէ այդ գործունէութիւնները մաս կը կապեն իրանեան գաղտնի աշխատանքներու՝ կորիչային վէնքերու մշակումին համար:

Սակայն Խարապի ըսած է նաեւ, թէ հակառակ ՄԱԿի գործակալութեան հետ տարակարծութիւններուն, Իրան կորիչային վէնքերու տարածումը արգիլող համաձայնագիրէն քաշուելու որեւէ նպատակ չունի:

ԵՐՈՊԱԿԱՆ ՌԵՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԱՄԱԶԱՅՆ՝ ԹՈՒՐԲԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԵԿԱՆ 14 ՄԻԼԻԱՌ ԵՐՈՅԻ ԲԵՌՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԷՋ 6

Le Savoir-Faire en Lumière

G. AYANIAN & SONS

Dora, (01)255222/3/4/5/6
Gemmayzé, (01)447000-445396
(03)627728/9
Fax: (01)265187-582357
E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanian.com

ԼԻԲԱՆԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՑ ԻՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց քաղաքական, զինուորական եւ բարձրաստիճանային անձնակազմի անդամներ, որոնց հետ քննարկեց շրջանային եւ միջազգային իրադարձութիւնները, հարաւային Լիբանանի սահմանային կացութիւնը, ինչպէս նաեւ Սուրիոյ դէմ կատարուած իսրայէլեան բռնարարները:

ՀԱՄԱԶԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ
«Երմիւն Ծանարգեանի բեմադրութեամբ
«ԱՐԱՐԱՏԸ ԵՒ ԵՍ»
ԹԱՏԵՐԱԿԱՆ

Ներկայացուած էր ԵՐԵՎԱՆԵԱՆ 1
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐԱՏՕՆԻ (ԱՐՄՍՈՆՕ)

Կատարողութեամբ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ
«ԺՈՐԺ ՄԱՐԳԻՍԵԱՆ» թարգմարախումբի
Քանադայի ԳԱԼՈՒՄՍ ԸՄՆԱԸՆԴԱՆԻ

Տեղի կ'ունենայ Զորքշաբթի, 8 Հոկտեմբեր 2003,
երեկոյեան ժամը 8:30ին,
«Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ: